ը) արգելել օրենսդրության պահանջների խախտմամբ կատարվող ստուգումը,

թ) ծանոթանալ ստուգումների արձանագրություններին,

ժ) ներկայացնել բացատրություններ, հարուցել միջնորդություններ,

ժա) չկատարել ստուգումն իրականացնող անձանց իրավասություններից, ինչպես նաև ստուգման նպատակներից չբխող պահանջները,

ժբ) իր շահերի պաշտպանության նպատակով ստուգումներին մասնակից դարձնել մասնագետների, փորձագետների, ներկայացուցիչների, փաստաբանների:

Իրավաբանական և ֆիզիկական անձինք պարտավոր են.

ա) ապահովել սահմանված բուսասանիտարական կանոնների պահանջների կատարումը,

բ) չխոչընդոտել բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի ծառայության կողմից իրականացվող օրինական ուսումնասիրություններին և բուսասանիտարական միջոցառումներին,

գ) սահմանված կարգով, բուսասանիտարական փորձաքննության նպատակով, հատկացնել փորձանմուշներ:

ՄԿՆԱՆՄԱՆ ԿՐԾՈՂՆԵՐԻ ԴԵՄ ՔԻՄԻԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հայաստանում մկնանման կրծողների դեմ պայքարն իրականացվում է քիմիական ներգործության միջոցների կիրառմամբ՝ մկնասպան թունանյութով (ցինկի ֆոսֆիդ) թունավորված գրավչանյութով:

Ցինկի ֆոսֆիդը, որը մուգ մոխրագույն, յուրահատուկ հոտով փոշի է, պատրաստուկում կազմում է 80%: Այն դասվում է ուժեղ թունունակ, արագ ազդող մկնասպան պատրաստուկների խմբին:

Թունավորված գրավչանյութը պատրաստվում է հետևյալ կերպ. 1կգ թունավորված գրավչանյութ պատրաստելու համար օգտագործվում է 25 գրամ ցինկի ֆոսֆիդ, 15-20 գրամ բուսական յուղ կամ ավտոլ և 1կգ գրավչանյութ (ցորեն, գարի կամ վարսակ):

Հատիկին նախօրոք ավելացվում է բուսական յուղ կամ ավտոլ, այնուհետև ցինկի ֆոսֆիդ և խառնվում է այնքան, մինչև բոլոր հատիկները հավասարապես ծածկվում են թունանյութով: Թունավորված գրավչանյութը պետք է գդալով լցնել բնանցքերի մեջ՝ յուրաքանչյուրում 10-15 հատիկ:

Նախազգուշական և անվտանգության միջոցառումները գրավչանյութը պատրաստելիս և օգտագործելիս

ա) գրավչանյութի հետ աշխատողները պետք է ունենան համապատասխան արտահագուստ, պաշտպանիչ դնչակալ, ռետինե ձեռնոցներ, որոնք կբացառեն գրավչանյութի շփումը մաշկի հետ,

բ) գրավչանյութը պետք է պատրաստել կենտրոնացված կարգով, մասնագետի հսկողությամբ, հատուկ հարթակների վրա կամ բաց տարաների մեջ,

գ) պայքարի աշխատանքները սկսելուց առաջ համայնքի ղեկավարը պարտավոր է հայտարարություններ ի ձևով և լրատվական միջոցներով իրազեկել ազգաբնակչությանը պայքարի միջոցառումների իրականացման մասին,

դ) թունավորված գրավչանյութերով մշակված տարածքներում 20 օր արգելվում է անասունների արածեցումը:

Սույն տեղեկատվական թերթիկը պատրաստվել և հրատարակվել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (հասցե՝ ք. Երևան, Նալբանդյան 7, բն. 2, հեռ.՝ 540199, www.ayla.am) կողմից՝ PriceWaterHouseCoopers-ի և ՀՀ կառավարության կողմից իրականացվող «Հայաստան. Հանրային ոլորտի բարեփոխումների ծրագրի» շրջանակներում՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի օժանդակությամբ:

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Սույն տեղեկատվական թերթիկում տեղեկատվություն է տրվում բույսերի պաշտպանության համակարգի խնդիրների, այդ ոլորտում իրականացվող գործառույթների, մկնանման կրծողների դեմ տարվող քիմիական պայքարի շրջանակներում իրականացվող միջոցառումների և այլ հարցերի վերաբերյալ:

Մայիս, 2005

ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բույսերի պաշտպանությունը բույսերի, բերքի և բուսական ծագում ունեցող մթերքի, վնասատուների, հիվանդությունների, կարանտին և այլ մոլախոտերի դեմ տարվող միջոցառումների, թունաքիմիկատների, կենսապատրաստուկների պետական փորձարկման, արտադրության, պահպանման, փոխադրման, կիրառման, ինչպես նաև շրջակա միջավայրի, մարդու, բույսերի ու կենդանիների պահպանությանն ուղղված գիտականորեն հիմնավորված միջոցառումների համալիր է:

Բույսերի պաշտպանության խնդիրներն են՝

ա) իրականացնել միջոցառումներ բույսերի համար վնասակար օրգանիզմների զանգվածային բազմացումն ու տարածումը ժամանակին կանխատեսելու, ախտորոշելու և կանխարգելելու նպատակով,

բ) ապահովել գյուղատնտեսական մշակաբույսերի բուսասանիտարական վիճակի բարելավումը, էկոլոգիապես մաքուր բերքի ստացումը, շրջակա միջավայրին, բուսական և կենդանական աշխարհին սպառնացող վնասի բացառումը:

Բույսերի պաշտպանության գործառույթներն իրականացնում են «Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որը տարածքային ստորաբաժանումներ ունի ՀՀ բոլոր մարզերում, ինչպես նաև բույսերի պաշտպանության գիտահետազոտական հաստատությունները:

Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության ծառայությունը իրականացնում է հետևյալ գործառույթները՝

ա) իրականացնում է բույսերի պաշտպանության ծրագրեր,

բ) վերլուծում է գյուղատնտեսական մշակաբույսերի բուսասանիտարական վիճակը, անհրաժեշտության դեպքում իրազեկում է լիազորված մարմնին և տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ վնասակար օրգանիզմների հայտնաբերման, տարածման և դրանց դեմ պայքարի գիտականորեն հիմնավորված համալիր միջոցառումների կիրառման մասին,

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով իրավաբանական և ֆիզիկական անձանց փորձաքննության միջոցով տալիս է եզրակացություն՝ բույսերի պաշտպանության միջոցների արտադրության, պահպանման, վաճառքի, ներկրման և արտահանման համար,

դ) կանխարգելիչ միջոցներ է ձեռնարկում չգրանցված, օգտագործումից հանված, բնակչության առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր՝ բույսերի պաշտպանության միջոցների վաճառքի, օգտագործման և ագրարային կանոնների խախտմամբ կատարվող պայքարի աշխատանքների իրականացման ուղղությամբ,

ե) աջակցում է իրավաբանական և ֆիզիկական անձանց հողային, արտադրական, առևտրային և պահեստային տարածքներում բույսերի և այլ կարգավորվող առարկաների պաշտպանությանն ուղղված միջոցառումներ իրականացնելու գործում:

ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒՅՍԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ, ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԵՎ ՏԱՐԱՆՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող այլ առարկաների մուտքը ՀՀ սահմանային կետերով թույլատրվում է միայն բուսասանիտարական պարտադիր ստուգում անցնելուց հետո:

Բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող այլ առարկաների մաքսային ձևակերպումը կատարվում է բուսասանիտարական նորմերին համապատասխանությունը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում:

Բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող այլ առարկաների արտահանումը ՀՀ տարածքից թույլատրվում է բուսասանիտարական հավաստագրերի առկայության դեպքում: Արտահանվող բույսերի, բուսական արտադրանքի կարգավորվող այլ առարկաների համար բուսասանիտարական հավաստագիրը տրվում է այն դեպքում, երբ դա համապատասխանում է ներկրող երկրների բուսասանիտարական նորմերին:

Տարանցիկ բույսերը, բուսական արտադրանքը և կարգավորվող այլ առարկաները ՀՀ սահմանային կետերում ենթակա չեն բուսասանիտարական հսկողության, եթե դրանք գտնվում են արտահոսքը բացառող ամբողջովին փակ, կնիքով զմռսված տարաներում:

Եթե բույսերը, բուսական արտադրանքը և կարգավորվող այլ առարկաները գտնվում են այնպիսի տարաներում, որոնցից հնարավոր է վնասակար օրգանիզմների ներթափանցում շրջակա միջավայր, կամ կան ստույգ տեղեկություններ նման վտանգի հնարավորության մասին, ապա դրանք նույնպես ենթակա են պարտադիր բուսասանիտարական ստուգման: Այս դեպքում տարանցիկ բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող այլ առարկաների մուտքը ՀՀ տարածք հնարավոր է սահմանային կարանտին տեսուչի համապատասխան փաստաթղթի առկայության դեպքում:

ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բույսերի պաշտպանության բնագավառում **իրավաբանական և ֆիզիկական անձինք իրավունք ունեն՝**

ա) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկել բույսերի պաշտպանության և բույսերի կարանտինի ծառայության գործողությունները,

բ) դատական կարգով պահանջել նշված ծառայության ապօրինի գործողության կամ անգործության հետևանքով նրանց պատճառած վնասի փոխհատուցում,

գ) պարզել իրականացվող հսկողության ձևի կիրառման նպատակը,

դ) հսկողություն իրականացնող մարմնից ստանալ համապատասխան պարզաբանումներ իր իրավունքների մասին,

ե) առարկել հսկողության մարմնի գործողությունների դեմ և պահանջել առարկությունները գրանցել արձանագրությունում,

զ) ծանոթանալ արձանագրություններին, որոնց նա մասնակցել կամ ներկա է գտնվել, և դիտողություններ ներկայացնել արձանագրությունում գրառումների ճշտության ու լրիվության վերաբերյալ, պահանջել նշված արձանագրությունում գրանցել այն հանգամանքների մասին, որոնք, իր կարծիքով, պետք է նշվեն,

է) ստանալ հսկողություն իրականացնող մարմնի ապօրինի գործողությունների հետևանքով պատճառված վնասի հատուցումը,